8203	2.6. Համայնքի բյուջեի հաշվում միջոցների		,00	,00	,00	,00	,00	,00	-1 305 021,621	-195 639,742	-1 109 381,879	
8204	որից՝ ծախսերի ֆինանսավորում և չուղղված		,00	,00	,00	,00	,00	,00	,00			
8300	Բ. ԱՐՏԱՔԻՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐ (տող 8310)		,00	,00	,00	,00	,00	,00	,00	,00	,00	,00
	այդ թվում՝											
8310	1. ՓՈՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 8311+տող)		,00	,00	,00	,00	,00	,00	,00	,00	,00	,00
	այդ թվում՝											
8311	1.1. Արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի)		,00	X	,00	,00	X	,00	,00	X	,00	,00
	որից՝											



8312	- թողարկումից և տեղաբաշխումի	9121	,00	X	,00	,00	X	,00	,00	X	,00	,00
8313	- հիմնական գումարի մարում	6121	,00	X	,00	,00	X	,00	,00	X	,00	
8320	1.2. Վարկեր և փոխառվածքներ ներ (ստացում և այդ թվում՝		,00	,00	,00	,00	,00	,00	,00	,00	,00	,00
8321	1.2.1. Վարկեր (տող 8322+տող 8330)		,00	X	,00	,00	X	,00	,00	X	,00	,00
8322	- վարկերի ստացում	9122	,00	X	,00	,00	X	,00	,00	X	,00	,00
8330	- ստացված վարկերի հիմնական	6122	,00	X	,00	,00	X	,00	,00	X	,00	,00
8340	1.2.2. Փոխառվածքներ ներ (տող որից՝		,00	,00	,00	,00	,00	,00	,00	,00	,00	,00
8341	- փոխառվածքներ ներ ստացում	9122	,00	,00	X	,00	,00	X	,00	,00	,00	X
8350	- ստացված փոխառվածքներ ներ գումարի	6122	,00	,00	X	,00	,00	X	,00	,00	,00	X



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ապրիլի 2025 թվականի N 42-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ 2025-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4.4 հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 25-ի համար 07-Լ հրամանով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման տեղական կառավարման 2025-2029 թթ. պլանը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -15

Դեմ -0

Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ

Գ. ԶԱՎՈՒԿՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2025 ապրիլի 07

ք. Տաշիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ



ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ
ՊԼԱՆ

(2025-2029 թթ.)

2025 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1. Ներածութիւն.....	3
1.2. Հիմնահենհիրներ, առաջնահերթութիւններ, ՏԵՍԼԱԿԱՆ.....	8
1.3. ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ.....	12
1.4. ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ ԵՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ.....	14
1.5. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ.....	16
1.6. ԻՐԱՋԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ.....	24
1.7. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵ.....	30
1.8. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	33

ԳԼՈՒԽ 2. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

2.1 ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ.....	38
2.2 ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ (ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ).....	39
2.3 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ (ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ).....	45
2.4 ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԲՅՈՒՋԵ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	47
2.5 ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ.....	52

ԳԼՈՒԽ 3. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ.....	55
3.2 ԹԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	57
3.3 ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	57

1.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1

Պլանի անվանում	ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2025-2029թթ պլան. նախատեսվող վերանայման ամսաթվերը՝ 2026թ ապրիլ, 2028թ ապրիլ
Պլանավորման մեջ ընդգրկված համայնք, բնակավայրեր	Համայնք՝ Տաշիր բնակավայրեր՝ Տաշիր, Լեռնահովիտ, Մեղովկա, Կրուգլայա Շիշկա, Սարատովկա, Գետավան, Նովոսելցովո, Կաթնառատ, Բլագոդարնոյե, Դաշտադեմ, Մեղվահովիտ, Նորամուտ, Մեծավան, Ջյունաշոդ, Պաղաղբյուր, Միխայլովկա, Սարչապետ, Պրիվոլնոյե, Պետրովկա, Նորաշեն, Արծնի, Ապավեն, Ձորամուտ, Գոգավան
Պլանավորման ժամանակաշրջան	2025-2029թթ.
Ներկայացվող Պլանի նախատեսված վերանայման ամսաթվերը	2026թ ապրիլ, 2028թ ապրիլ
Պլանը կազմող անձանց անուն, ազգանուն, պաշտոն	Անժելա Մարտիրոսյան՝ համայնքի ղեկավարի օգնական, Խաչեն Մանուկյան՝ «Տաշիրի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն
Պլանը կազմող անձանց էլ. հասցե և հեռախոս	am010587@mail.ru , հեռ.՝ 093572204, khachen-89@mail.ru , հեռ.՝ 094571177
Պլանի էլեկտրոնային տարբերակը ներբեռնելու էլ. հասցե	tashircity.am

Ամբողջ աշխարհում երկրները ստիպված են առերեսվել կոշտ թափոնների աճող ծավալների մարտահրավերին: Սրա համար անհրաժեշտ են թափոնների կառավարման արդյունավետ քաղաքականություններ, ինչպես նաև դրանք իրականացնելու կարողություններ, առանց որոնց դժվար կլինի, չեզոքացնել առաջացող բացասական հետևանքները: Թափոնների պատշաճ կառավարումը տալիս է բազմաթիվ օգուտներ, այդ թվում՝ տնտեսական, հանրային առողջության, սոցիալական և բնապահպանական ձեռքբերումներ, ինչպես նաև զբոսաշրջության վրա դրական ազդեցություն,

առողջապահական ռիսկերի կրճատում՝ հողի, ջրի և օդի աղտոտվածության նվազեցման միջոցով, վտանգավոր թափոններով աղտոտվածության նվազեցում, հողի առավել արդյունավետ կառավարում և հումքային նյութերի պահպանություն: Ինտեգրված թափոնների կառավարումը ենթադրում է ավելի շատ քաղաքացիական մասնակցություն և ներդրում քաղաքային զարգացման գործում, գոհունակության բարձր մակարդակ մատուցվող ծառայություններից և համայնքի ավելի մեծ հեղինակություն:

Տաշիր համայնքի ԿԿԹ-ի կառավարման պլանի կազմման անհրաժեշտությունը բխում է ոլորտում կիրառվող նոր մեթոդաբանության առկայությունից, որը կանոնակարգում է հանրապետության բնակավայրերում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման, պահպանման, տեղադրման (հեռացման), վերամշակման ու օգտահանման գործընթացների պլանավորումն ու մշտադիտարկումը և սահմանում աղբահանության ու թափոնների արդյունավետ կառավարման համար չափորոշիչներ:

Հայաստանում աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման պլանների (այսուհետև՝ Պլան) կազմումը ՀՀ բնակավայրերում աղբահանության և կոշտ թափոնների կառավարման կայուն և ինտեգրված արդյունավետ համակարգի ներդրման, միասնական քաղաքականության վարման, հանրապետության բոլոր համայնքներում աղբահանության ծառայության մատուցման կայուն որակի ապահովման անհրաժեշտ մեխանիզմ է:

Այս պլանը նպատակ ունի ձևավորելու համապարփակ մոտեցում աղբահանության կառավարման ոլորտում, համակարգելու աղբահանության պլանավորումը տեղական ինքնակառավարման մարմիններում, ապահովելու նպաստավոր պայմաններ աղբահանության և կոշտ թափոնների կառավարման կայուն համակարգի ներդրման և թափոնների գործածության ամբողջական շղթայի գործարկման համար:

Պլանների մշակումը նպատակաուղղված է նաև հանրապետության բոլոր բնակավայրերը աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ինտեգրված համակարգում ընդգրկմանը, աղբահանության ծառայությունների որակի գնահատման մեխանիզմների և ծառայությունների մատուցման ընթացքում վերահսկողության և մշտադիտարկման համակարգերի ներդրմանը:

Կիրառվող մեթոդաբանությամբ նախատեսվում է տեղական մակարդակում պլանավորել աղբահանության և կոշտ թափոնների կայուն կառավարման գործընթացը՝ համահունչ աղբահանության ռազմավարության գերակայություններին:

Համաձայն այս մեթոդաբանության՝ Պլանը պետք է ներառվի ինչպես համայնքի հնգամյա զարգացման ծրագրում, այնպես էլ ամենամյա աշխատանքային պլաններում: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար պլանավորման գործընթացի արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ է Պլանով սահմանված գործողությունների և թիրախների իրագործման արդյունքների գնահատում, ընթացիկ խնդիրների և խոչընդոտների վերլուծություն՝ մշտադիտարկում և հաշվետվողականություն, որը հնարավորություն կտա նախ բացահայտելու ընթացիկ Պլանում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, ինչպես նաև գնահատելու հաջորդ ժամանակահատվածի պլանավորումն իրականացնելու գերակայությունները և զարգացման ներուժը:

Տաշիր համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը բխում է թափոնների հիերարխիայի սահմանումներից:

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Աղբահանության համակարգին առնչվող հիմնական օրենսդրությունը նկարագրված է ստորև բերված աղյուսակում

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք	Օրենքը սահմանում է. - աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում լիազոր մարմնի լիազորությունները, - աղբահանության վճար վճարողների շրջանակը -աղբահանությանը և սանիտարական մաքրմանը ներկայացվող պահանջները -աղբահանության վճար կատարելու հիմքը, դրա դրույքաչափը, հաշվարկման և վճարման կարգը -աղբահանության վճար վճարողների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը
«Թափոնների մասին» ՀՀ օրենք	Օրենքը սահմանում է. -թափոնների գործածության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները,

	-թափոնների գործածության ոլորտում պետական նորմավորումը, հաշվառումը, անձնագրավորումը, վիճակագրական հաշվետվությունը և ստանդարտացումը -թափոնների գործածության ոլորտում սուբյեկտների իրավունքները և պարտականությունները - թափոնների օգտահանման և դրանց գոյացման ծավալների նվազեցման միջոցառումների տնտեսական խթանման ապահովումը
«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք	օրենքը սահմանում է. - համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը որպես համայնքի պարտադիր խնդիր, - համայնքի տարածքում աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումն ու կազմակերպումը Համայնքի ղեկավարի կողմից դրույթը - համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, ծառայությունների իրականացման համար համայնքի ավագանու կողմից համայնքի բյուջե մուտքագրվող վճարների սահմանում և այդ վճարների չափի հաստատում համայնքի ավագանու որոշմամբ:
«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք	Օրենքով որպես տեղական վճար է սահմանվում՝ - համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքների կազմակերպման համար, - համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար
Աղբահանության ոլորտի ենթաօրենսդրական կարգավորումները	
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և	Հրամանով հաստատվել է՝ աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման

ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 25-ի «Աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանների կազմման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N 07-Լ հրաման	տեղական պլանների կազմման մեթոդական ուղեցույցը
«Լոռու մարզի Տաշիր համայնքի հնգամյա զարգացման ծրագիր 2023-2027թթ.»	Համայնքի զարգացման տեսլականն է՝ Տաշիր համայնքը համարվում է զբոսաշրջության և անասնապահության կենտրոն, բարելավված են համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը, մշակութային և հանգստի պայմանները, մաքուր, բարեկարգ, գրավիչ և մրցունակ համայնք է՝ զարգացած ՏՏ ոլորտով:

1.2 ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵՍԼԱԿԱՆ

ԿԿԹ-ի կառավարումը Հայաստանում շատ ցածր մակարդակում է, որը հանգեցնում է բազմաթիվ բնապահպանական, սոցիալական և առողջապահական խնդիրների առաջացման: Վերջիններս խիստ կապակցված են ռազմավարական ծրագրում ներառված այլ ոլորտներում առկա խնդիրների հետ՝ ջրի, հանքարդյունաբերության, կենսաբազմազանության, կլիմայի փոփոխության, մթնոլորտային օդի, թափոնների և սոցիալ-տնտեսական վիճակի:

Տաշիր համայնքի կոշտ թափոնների կառավարման համակարգում առկա հիմնախնդիրները.

- Համայնքի բնակավայրերի տարբեր հատվածներում ծառայությունների մատուցման իրարից տարբերվող մակարդակներ՝ շահագործվող տեխնիկայի քանակի, տեսականու, տեղադրված աղբամանների ծավալային և տիպային տարբերություն,
- Աղբամանների անհրաժեշտ քանակի բացակայություն,
- Աղբամանների տեղադրման տեղադիրքի ճիշտ պլանավորում,
- Շահագործվող տեխնիկայի ֆիզիկական մաշվածություն և անհրաժեշտ քանակի բացակայություն,
- Աղբի վերամշակման կենտրոնների բացակայություն,
- Աղբի տեսակավորման մշակույթի բացակայություն,
- Աղբավայրում տեղադրվող աղբի քանակ,
- 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների հետևանքով հեղեղումների արդյունքում Տաշիր գետի աղտոտում,
- Աշխատակիցների վերապատրաստման անհրաժեշտություն,
- Բնակիչների իրազեկվածության համապատասխան աստիճանի բացակայություն,
- Չնախատեսված վայրերում աղբի կուտակում:

Ռազմավարության նպատակը.

Աղբահանության համակարգի ռազմավարության ընդունման նպատակն է՝ համայնքի ողջ տարածքում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման և անվտանգ հեռացման կայուն համակարգի ներդրումը՝ նպատակաուղղված բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովմանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբաթափության բացասական և վտանգավոր ներգործության նվազեցմանն ու չեզոքացմանը:

Սկզբնաղբյուրում գոյացող աղբի կրճատումը, քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրազեկվածության անհրաժեշտ աստիճանի ապահովումը, Տաշիր գետի մաքրումը աղբից, չնախատեսված վայրերում աղբի կուտակումները վերացնելը և կանխելը:

Աղբահանության կայուն համակարգի զարգացման հիմնական գերակայություններն ու ուղղություններն են.

- աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների բարելավումը.
- աղբահանության և սանիտարական մաքրման արդյունավետ սխեմաների ներդրումը.
- աղբահանության ծառայություն մատուցող-սպառող հարաբերությունների կարգավորումը.
- աղբահանության ծառայությունների որակի գնահատման մեխանիզմների ներդրումը.
- համայնքի տարածքում աղբի պատշաճ հավաքման, տեղափոխման ու հեռացման, ինչպես նաև աղբավայրի շահագործման նպատակով համապատասխան հագեցվածությամբ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավումը.
- աղբատար մեքենաների և աղբամանների անհրաժեշտ քանակի համալրումը.
- համայնքի տարածքում ենթակառուցվածքների գործելակերպի և բնակչության խտության ուսումնասիրությունը՝ աղբարկղերի ճիշտ տեղադրման վայրերը սահմանելու համար.

- Համայնքի աղբահանության իրականացման 50 %-ը իրականացնել տեղադրված աղբամաններից.
- համապատասխան աշխատակիցների վերապատրաստում.
- քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրազեկվածության անհրաժեշտ աստիճանի ապահովումը.
- Տաշիր գետի ընդհանուր մաքրում 6,615 կմ երկարությամբ Տաշիր քաղաքի տարածքում՝ 2024 թվականի մայիսի հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների հետևանքներից.
- գոյացող աղբի քանակի կրճատումը սկզբնաղբյուրում.
- չնախատեսված վայրերում աղբի կուտակումները վերացնելը և կանխելը՝ օրենքով սահմանված միջոցների կրառմամբ.
- կրկնակի օգտագործման կամ վերաօգտագործման, վերամշակման, վերականգնման և օգտահանման ենթակա թափոնների տեսակավորված հավաքման մեխանիզմների իրազեկվածության բարձրացման թեմաներով սեմինարների կազմակերպումը բնակիչների հետ:

Տաշիր համայնքի աղբահանության տեսլականն է.

Տաշիր համայնքի տարածքում ներդրվել է աղբի տեսակավորման մշակույթը, սկզբնաղբյուրում կրճատվել է թափոնների գոյացությունը, համայնքին սպասարկում են օպերատորներ, որոնք համալրված են անհրաժեշտ սարքավորումներով ու տեխնիկական միջոցներով, ունեն համապատասխան հմտություններով և գիտելիքներով աշխատանքային թիմ: Համայնքը ապահովված է անհրաժեշտ քանակի և որակի աղբամաններով: Աղբահանության օպերատիվ և պատշաճ կազմակերպումը ապահովում է կանաչ, մաքուր և առողջ շրջակա միջավայր, որտեղ բնակվում է իրազեկված, բնության և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու քաղաքացին:

Տաշիր համայնքի աղբահանության իրականացման ուժեղ և թույլ կողմեր.

Ուժեղ	ԹուօՅԼ
• Համայնքի 24 բնակավայրերում աղբահանության ծառայությունների կանոնավոր մատուցում. • Աղբամանների առկայություն. • Կոմունալ ՀՈԱԿ-ի առկայություն. • Աշխատուժի առկայություն. • Հանրային իրազեկվածության և մասնակցության հնարավորություն. • աղբահանության վարձավճարների հավաքագրման %-ի աճի տենդենց.	• Համայնքի բնակավայրերի տարբեր հատվածներում ծառայությունների մատուցման իրարից տարբերվող մակարդակներ՝ շահագործվող տեխնիկայի քանակի, տեսականու, տեղադրված աղբամանների ծավալային և տիպային տարբերություն. • Աղբամանների անհրաժեշտ քանակի բացակայություն. • Շահագործվող տեխնիկայի ֆիզիկական մաշվածություն և անհրաժեշտ քանակի բացակայություն. • Աղբի վերամշակման կենտրոնների բացակայություն. • Աղբի տեսակավորման մշակույթի բացակայություն.

1.3 ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Տաշիր բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է 2022 թվականի նոյեմբերին «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2022 թվականի հունիսի 9-ի ՀՀ ՀՕ-266-Ն օրենքով: Այն ընդգրկում է ՀՀ Լոռու մարզի նախկին Տաշիր քաղաքային և Լեռնահովիտ, Կաթնառատ, Սարատովկա, Բլագոդարնոյե, Նովոսելցովո, Մեղվահովիտ, Դաշտադեմ, Մեղովկա, Գետավան, Նորամուտ, Կրուգլայա Շիշկա, Սարչապետ, Արծնի, Ապավեն, Նորաշեն, Պրիվոլնոյե, Պետրովկա, Ձորամուտ, Գոգավան, Մեծավան, Միխայլովկա, Ձյունաշող, Պաղաղբյուր գյուղական բնակավայրերը:

Տաշիր քաղաքը (նախկինում՝ Վորոնցովկա, Կալինինո) Տաշիր համայնքի կենտրոնն է: Եղել է նախկին Կալինինո շրջանի վարչական կենտրոնը: Բնակավայրը հիմնադրվել է 1844 թվականին ռուսական կայսրության կառավարության կարգադրությամբ՝ հիմնականում Սարատովի մարզից այստեղ տեղափոխված ռուսների և աքսորված ռուս մոլոկանների կողմից և Կովկասի փոխարքայի անունով կոչվել է Վորոնցովկա: 1935 թվականին վերանվանվել է Կալինինո հեղափոխական գործիչ Կալինինի անունով: 1961 թվականից դարձել է քաղաքատիպ ավան, իսկ 1983 թվականից դասվել Հայաստանի քաղաքների շարքին: Տաշիր է վերանվանվել 1991 թվականին:

ա. Պլանավորման տարածքի նկարագրություն

Աղյուսակ 2


	Ընդհանուր տարածք	Քաղաքային	Գյուղական	Արդյունաբերական	Գյուղատնտեսական	Կանաչ, անտառային
Տարածքը (հա)	68882,09	7590	61292,09	29,08	60514,76	4211,17
Տարածքը տոկոսով ընդհանուրից (%)		11	89	0,04	87,8	6,1

բ. Աշխարհագրական սահմաններ

Տաշիր համայնքը գտնվում է Լոռու մարզի հյուսիս-արևմտյան մասում: Սահմանակցում է Ստեփանավան, Լոռի Բերդ և Ալավերդի համայնքների հետ: Հյուսիսում սահմանակցում է Վրաստանի հետ, արևմուտքից՝ ՀՀ Շիրակի մարզին: Ունի ծովի մակարդակից 1470-1750 մետր բարձրություն: Համայնքով հոսում է Տաշիր գետը, որը հանդիսանում է Դեբետ գետի

վտակ: Տաշիր համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից 52 կմ է, մայրաքաղաքից՝ 163 կմ: Տաշիր համայնքով է անցնում միջպետական նշանակության Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստան մայրուղին:

Լոռու մարզի Տաշիր համայնքի աշխարհագրական սամանները



գ. Ժողովրդագրական տեղեկատվություն

Աղյուսակ 3

Գրանցված բնակչություն (մարդ)	Փաստացի բնակվող (մարդ)	Տնտեսությունների թիվ	Բազմաբնակարան շենքերի թիվ	Բնակարանների թիվ
30064	20734	7123	40	1160

դ. Կոշտ թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը

Աղյուսակ 4

Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակները	Քանակ	Նշումներ
Բնակելի նպատակային նշանակության շինություններ	7754	
Բազմաբնակարան բնակելի շենքեր	40	
Անհատական բնակելի տներ	7714	

Ոչ բնակելի նպատակային նշանակության շինություններ	266	
Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շինություններ	229	
Հյուրանոցային և հյուրատնային տնտեսություններ, սպորտի համարանախատեսված, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների շինություններ	2	
Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շինություններ	10	
Արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինություններ	5	
Գիտակրթական, մշակութային և գրասենյակային նշանակության շինություններ	20	
Շինություններ, որտեղ իրականացվում է մեկից ավելի, առանձնացված տնտեսական գործունեություն	0	

1.4 ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ ԵՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Աղբահանության պլանավորման շրջանակներում հատկապես գոյացող թափոնների քանակի նվազեցման, տեսակավորման, վերամշակման, օգտահանման ծրագրեր և միջոցառումներ մշակելիս ու նախատեսելիս՝ առանձնապես կարևոր է թափոնների քանակի և բաղադրության որոշումը:

ա. Գոյացող թափոնների քանակի ընդունված ցուցանիշներն են.

- մեկ տարում գոյացող թափոնների ընդհանուր զանգվածը (տոննա/տարեկան)
- մեկ տարում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/կգ/տարի)
- մեկ օրում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/կգ/օր)

Բաղադրությունն ընդունված է ներկայացնել տոկոսով՝ ըստ յուրաքանչյուր բաժնեմասի ընդհանուր զանգվածի չափաբաժնի:

բ. Թափոնների բաղադրության հիմնական տեսակները/հոսքերը

▪ **Կոշտ կենցաղային թափոն՝** աղբամաններում կուտակվող կոշտ կենցաղային թափոն՝ «Թափոնների մասին» ՀՀ օրենքով սահմանված թափոն,

▪ **Խոշոր եզրաչափի թափոն՝** 1խմ և ավել ծավալով թափոն, որը չի տեղադրվում աղբամանում,

▪ **Շինարարական աղբ՝** քաղաքաշինական և շինարարական գործունեության հետևանքով առաջացող աղբ,

▪ **Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն,**

▪ **Փաթեթավորման թափոն՝** կոմերցիոն գոտում գոյացող փաթեթավորման թափոն,

▪ **Էլեկտրական և էլեկտրոնային թափոն (ԷԷՍ)՝** չշահագործվող սարքավորում, որը սնուցվում է էլեկտրական ցանցից կամ մարտկոցից,

▪ **Կենսաբանական թափոն՝** կենդանական ծագման պարենային և ոչ պարենային հումքի վերամշակումից ստացված թափոններ, ինչպես նաև անասնապահական, թռչնաբուծական և ձկնաբուծական ձեռնարկությունների գործունեության հետևանքով առաջացած թափոններ

▪ **Պարտեզային թափոն՝** այգիների, պուրակների և այլ կանաչ տարածքներից հավաքված թափոն, այդ թվում՝ էտման թափոն, տերևներ և այլ նմանատիպ թափոն,

▪ **Անվադողեր՝** մարդատար, բեռնատար մեքենաների և հեծանիվների շահագործումից դուրս եկած անվադողեր

▪ **Վտանգավոր թափոն՝** (բացի ԷԷՍ թափոնից)՝ ներկեր, քիմիկատներ, դյուրավառ նյութեր, բժշկական թափոն և այլն:

Պլանավորման տարածքում ներկայացվում է թափոնների բաղադրությունը՝ տոկոսներով ըստ ընդհանուրի:

Աղյուսակ 5

I Թափոնի տեսակը	%	II Թափոնի տեսակը՝ մանրակրկիթ բաղադրության ուսումնասիրության դեպքում	%
Կոշտ կենցաղային թափոն	100	-	-

1.5 ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

Տաշիր համայնքում իրականացվում է խառը, չտեսակավորված աղբի հավաքում և տեղափոխում: Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները Տաշիր համայնքի բոլոր 24 բնակավայրերում սպասարկվում է օպերատորների՝ Տաշիր համայնքային ենթակայության «Տաշիրի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ի և «ՇԻՆ» ՍՊԸ կողմից: Աղբի հավաքումը կատարվում է փողոցներում և բազմաբնակարան շենքերի բակերում տեղակայված աղբամաններից, բնակելի տներից և կազմակերպություններից՝ գրաֆիկով: «Տաշիրի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից աղբահանությունը իրականացվում է բազմաբնակարան շենքերի և համայնքի փողոցներում ու բակերում տեղակայված աղբամաններից, ինչպես նաև ՀՈԱԿ-ի կողմից է իրականացնում համայնքի սանիտարական մաքրման մի մասը և կանաչապատումը: «Շին» ՍՊԸ-ի կողմից իրականացվում է աղբահանություն բնակելի տներից և կազմակերպություններից՝ գրաֆիկով ժամանող աղբատարների միջոցով: Աղբը բնակավայրերից տեղափոխվում և տեղադրվում է Տաշիր քաղաքի վարչական տարածքում առկա աղբավայրում:

Աղյուսակ 6

	Թափոններ գործածության ձև	Նկարագրություն
I	Խառը, չտեսակավորված հավաքում և տեղափոխում	Թափոնների խառը հավաքում և հեռացում «Տաշիրի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ի և «Շին» ՍՊԸ կողմից դեպի աղբավայր
II	Թափոնների տեղադրում ոչ սանիտարական աղբավայրում	Տեղադրում ոչ սանիտարական աղբավայրում

ա. Թափոնների քանակն ըստ հիմնական տեսակների և դրանց գործածության ձևերի

Սույն ենթաբաժնում 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերում ներկայացված տեղեկատվության հիման վրա կազմվում է ամփոփ տեղեկատվական աղյուսակ՝ ըստ թափոնների քանակի, տեսակների և գործածության ձևերի (Աղյուսակ 7):

Աղյուսակ 7

Թափոնի տեսակ	Աղբի գոյացում 1 շնչի հաշվով, կգ/տարի/մարդ	Աղբի տարեկան գոյացում, տոննա/տարի	Թափոնների գործածության ձևեր							
			I	II	III	IV	V	VI	VII	Նշումներ
			Խառը հավաքում (% ընդհանուր քանակից)	Տեսակավորված հավաքում (% ընդհանուր քանակից)	Վերաօգտագործում /կրկնօգտագործում (% ընդհանուր քանակից)	Վերամշակում և/կամ օգտահանում (% ընդհանուր քանակից)	Վտանգավոր թափոնների չեզոքացում/վնասազերծում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում ոչ սանիտար. աղբավայրում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում սանիտար. աղբավայրում (% ընդհանուր քանակից)	
Կոշտ կենցաղային թափոն	193	4001	100	0	0	0	0	100	0	

Համաձայն թափոնների տեսակավորման դասակարգման՝ առանձնացվում են հետևյալ տեսակները և հաշվառման ձևերը.

1. **Խոշոր եզրաչափերի թափոն**-խոշոր եզրաչափերի թափոնը հիմնականում հեռացվում է տնտեսվարողների կողմից, հաշվառում չի իրականացվում:
2. **Շինարարական աղբ**- հիմնականում հեռացվում է տնտեսվարողների կողմից, հաշվառում չի իրականացվում:
3. **Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն**- հիմնականում հեռացվում է տնտեսվարողների կողմից, հաշվառում չի իրականացվում:
4. **Անվադողեր**- հաշվառում չի իրականացվում:
5. **Փաթեփափորում և փաթեթվածք**- հիմնականում հեռացվում է տնտեսվարողների կողմից, հաշվառում չի իրականացվում:
6. **Էլեկտրական և էլեկտրոնային թափոն**- հաշվառում չի իրականացվում:
7. **Կենսաբանական թափոն**- հաշվառում չի իրականացվում:
8. **Վտանգավոր թափոններ**- հաշվառում չի իրականացվում:

Տաշիր համայնքում աղբի հաշվառումն իրականացվում է ըստ ծավալի՝ համապատասխան կշեռների բացակայության պատճառով:

բ. Աղբահանության և կոշտ թափոնների հետ գործածություն

➤ **Տաշիր համայնքում աղբահանություն և կոշտ կենցաղային թափոնների հավաքում** կատարվում է՝

- փողոցներում և բակերում տեղակայված աղբամաններից,
- բնակելի տներից և կազմակերպություններից գրաֆիկով ժամանող աղբատարների միջոցով:

Համայնքի բնակչության 100 տոկոսը օգտվում է թափոնների հավաքման ծառայությունից:

Աղյուսակ 8

Թափոնների հավաքման մեթոդ	Ծառայությունից օգտվող բնակչություն (%)	Տեսակավորված հավաքում (տոննա)	Տեսակավորված հավաքում (%)	Չտեսակավորված հավաքում (տոննա)	Չտեսակավորված հավաքում (%)	Նշումներ
Աղբամաններից	16	0	0	548	100	
Աղբախցերից	0	0	0	0	0	Առկա չեն
Գրաֆիկով՝ տնից կամ կազմակերպությունից	84	0	0	3453	100	
Պատվերով՝ տնից կամ կազմակերպությունից	0	0	0	0	0	
Ինքնափոխադրում	0	0	0	0	0	

➤ **Աղբահանություն իրականացնող օպերատորներ**

Տաշիր համայնքի աղբահանությունը սպասարկվում է՝ «Տաշիրի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ի և «Շին» ՍՊԸ կողմից:

Աղյուսակ 9

Օպերատորի անվանում	Սպասարկվող համայնքներ/ բնակավայրեր	Սպասարկվող տարածքի բնակչության թիվ	Օպերատորի աղբատար մեքենաների թիվը	Օպերատորի աղբատար մեքենաների տեսակն, տարողությունը (բաց/փակ թափքով, կոմպակտոր են)	Հավաքվող թափոնների տեսակները/ խառը, տեսակավորված պլաստիկ, թուղթ..., շինարարական և այլն հավաքում	Օպերատորի աշխատանքի գնահատական (1-ից 5)
«Տաշիրի կոմունալ»	Տաշիր	2842	1	Մազ աղբատար	խառը	5

տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ի				ր-1, 8խմ, փակ		
«Շին» ՍՊԸ	Տաշիր, Լեռնահովիտ, Մեղովկա, Կրուգլայա Շիշկա, Սարատովկա, Գետական, Նովոսելցովո, Կաթնառատ, Բլագոդարնոյե, Դաշտադեն, Մեղվահովիտ, Նորամուտ, Մեծական, Ձյունաշող, Պաղաղբյուր, Միխայլովկա, Սարչապետ, Պրիվոլնոյե, Պետրովկա, Նորաշեն, Արծնի, Ապավեն, Ձորամուտ, Գոգավան	17892	4	Գազ 53-4 հատ, 6 խմ, բաց: Աղբի տեղափոխման ընթացքում թափքը ծածկվում է	խառը	5

➤ **Աղբի տեղափոխման սխեմաներ**

Սույն ենթաբաժնում նկարագրված է թե ինչպես է պլանավորման տարածքում կատարվում աղբահանությունը:

Աղյուսակ 10

Թափոնի տեսակ	Բնակավայր	Հեռավորություն մինչև աղբավայր, կմ	Հաճախականությունը
Կոշտ կենցաղային թափոն	Տաշիր	6	Շաբաթական 3 օր
	Լեռնահովիտ	16	Երեքշաբթի, ուրբաթ
	Մեղովկա	12	Երեքշաբթի, շաբաթ
	Կրուգլայա Շիշկա	14	Երեքշաբթի, շաբաթ
	Սարատովկա	2	Երեքշաբթի, շաբաթ
	Գետական	4	Երեքշաբթի, շաբաթ
	Նովոսելցովո	6	Երեքշաբթի, շաբաթ
	Կաթնառատ	22	Երկուշաբթի, հինգշաբթի

	Բլագոդարնոյե	16	Երկուշաբթի, հինգշաբթի
	Դաշտադեմ	16	Երկուշաբթի, հինգշաբթի
	Մեղվահովիտ	17	Երկուշաբթի, հինգշաբթի
	Նորամուտ	18	Երկուշաբթի, հինգշաբթի
	Մեծավան	16	Չորեքշաբթի, հինգշաբթի
	Ձյունաշող	21	Չորեքշաբթի
	Պաղադբյուր	26	Չորեքշաբթի
	Միխայլովկա	13	Չորեքշաբթի, շաբաթ
	Սարչապետ	22	Երեքշաբթի, ուրբաթ
	Պրիվոլնոյե	19	Երկուշաբթի, չորեքշաբթի
	Պետրովկա	14	Չորեքշաբթի, շաբաթ
	Նորաշեն	16	Չորեքշաբթի, շաբաթ
	Արծնի	21	Երեքշաբթի, հինգշաբթի
	Ապավեն	22	Երեքշաբթի, հինգշաբթի
	Ձորամուտ	16	Երեքշաբթի, հինգշաբթի
	Գոգավան	19	Երեքշաբթի, հինգշաբթի

➤ Աղբավայրեր և աղբանոցներ

Տաշիր համայնքի բոլոր 24 բնակավայրերի կոշտ կենցաղային թափոնները սպասարկող ՀՈԱԿ-ի և օպերատորի կողմից տեղափոխվում և տեղադրվում են Տաշիր համայնքի վարչական տարածքում առկա աղբավայրում:

Աղյուսակ 11

Աղբավայր /գտնվելու վայրը/	Շահագործող համայնքներ /բնակավայրեր	Աղբավայրի մակերես, հա	Տեղադրվող աղբի տեսակ	Ստեղծման իրավական հիմք /որոշման համար, ամսաթիվ /	Սեփականության /օգտագործման իրավունք	Շահագործողի անվանում	Աղբի տեղադրման վճարը /ՀՀ դրամ/տոննա	Դեպի աղբավայր տանող մուտքի ճանապարհի ատվածի վիճակը
Ք.Տաշիր	Տաշիր համայնք	5	Կոշտ կենցաղային թափոն	21.11.2014 թվականի N71-Ա ավագանու որոշում	Համայնքային սեփականություն	Տաշիրի համայնքապետարան	0	միջին

➤ Պատասխանատվության փաստացի բաշխումը

Համայնքապետարանի կողմից իրականացնել տեղեկատվական պաստառների պատվիրում և տեղադրում մարդաշատ, հասարակական վայրերում, սոցիալական ցանցերի, հայտարարությունների փակցման միջոցով հանրությանը տեղեկացնել կենցաղային մնացուկներով կամ թափոններով աղտոտելու օրենքով սահմանված տուգանքների վերաբերյալ:

Առաջարկություն ներկայացնել Քաղաքացիական հասարակական կազմակերպություններին իրազեկվածության բարձրացման նպատակով բնակիչների հետ սեմինարների անցկացման ծրագրերի ներգրավման վերաբերյալ:

Աղյուսակ 12

Պատասխանատուներ	Իրազեկություն բարձրացում (%)	Խառը հավաքում (%)	Տեսակավորված հավաքում (%)	Տեղափոխում (%)	Տեսակավորում /գործարանային/ (%)	Վերաօգտագործում /կրկնօգտագործում (%)	Վերամշակում և/կամ օգտահանում (%)	Վտանգավոր թափոնների վնասազերծում/վերացում (%)	Տեղադրում աղբավայրում (%)
ՏԻՄ	50	100	0	100	0	0	0	0	100
Քաղաքացիական կազմակերպություն	50	0	0	0	0	0	0	0	0

- **Աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման մեջ շահակիրների ներգրավվածությունն ըստ թափոնների տեսակների գործածության**

Սույն ենթաբաժնում ներկայացվում է թափոնների հիմնական տեսակների կառավարման համապատասխան փուլում ներգրավված դերակատարներին:

- ՏԻՄ
- Քաղաքացիական հասարակական կազմակերպություն /ՔԿ/

Աղյուսակ 13

Թափոնի տեսակ	Իրազեկության բարձրացում	Խառը հավաքում	Տեսակետի վաճառք	Տեղափոխում	Վերաօգտագործում /կրկնօգտագործում	Վերամշակում և/կամ օգտահանում	Տեղադրում արվարձանում
Կոշտ կենցաղային թափոն	ՏԻՄ, ՔԿ	ՏԻՄ	-	-	-	-	-

➤ Անձնակազմի կարողությունների գնահատում

Արդյունավետ պլանավորման համար կարևոր է հստակ գնահատել Աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման մեջ ներգրավված տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան անձնակազմի կարողություններն ըստ անհրաժեշտ հմտությունների մակարդակի (Աղյուսակ 14):

Աղյուսակ 14

Հմտություն/ ոլորտ	Համապատասխան գիտելիքներ ու հմտություն ունեցող աշխատակիցների թիվը	Գիտելիքների ու հմտությունների ներկայիս մակարդակ (1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց)	Նշումներ
Թափոնների կառավարման գիտելիքներ	4	3	
ՀՀ օրենսդրության իմացություն	4	4	
Տվյալների հավաքագրում	5	4	
Համակարգչային քարտեզագրում	2	3	
Գնումների կազմակերպում	2	4	
Պայմանագրերի կառավարում	2	4	
Գործառնական հմտություններ	4	4	
Ֆինանսական վերլուծության իմացություն	3	4	

1.6 ԻՐԱՋԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Թափոնների կայուն կառավարում ապահովելու կարևորագույն նախապայման է ինչպես բնակչության, այնպես էլ կառավարման համար պատասխանատու անձնակազմի իրազեկվածության անհրաժեշտ աստիճանը:

Պատասխանատուների իրազեկվածությունը կարևոր է Պլանը մշակելիս խնդիրները ճիշտ գնահատելու, լուծման առաջնահերթությունները հստակ սահմանելու և հետևողականորեն իրականացնելու համար:



Բնակչության իրազեկվածությամբ մեծապես պայմանավորված են սկզբնաղբյուրում թափոնների առաջացումը նվազագույնի հասցնելու, տեսակավորված հավաքելու, վերօգտագործելու հաջողությունները՝ հետևապես և Պլանի իրականացման հաջողությունը:

Իրազեկվածության աստիճանի գնահատման միջազգայնորեն հաջողված մեթոդ է բնակչության սոցիալական տարբեր խմբերում, տարբեր գործունեություն իրականացնող տնտեսվարողների, ինչպես նաև Պլանի մշակման և իրականացման համար պատասխանատու անձնակազմի շրջանում հարցումներ իրականացնելը՝ նախապես մշակված հարցաշարերով: Հարցաշարերը պետք է ուղղված լինեն թափոնների կառավարման խնդիրների վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրների, տեղեկացվածության, վերաբերմունքի և ակնկալիքների, ինչպես նաև թափոնների կառավարման առկա իրավիճակից բնակիչների և տնտեսվարողների գոհունակության աստիճանի գնահատմանը, ինչպես նաև պարունակեն տեղեկություններ այն լրացնողի/հարցվողի տարիքի, կրթության, մասնագիտության, զբաղվածության/ աշխատավայրի վերաբերյալ:


Ստորև ներկայացվում են Տաշիր համայնքի տարածքում բնակիչների շրջանում իրականացված հարցման արդյունքները.

1. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԿԱ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ


Կրթության տարբեր աստիճաններ (նախադպրոցական, դպրոցական, բուհական) Սոցիալական գովազդներ



Պաշտոնական տեղեկատվություն ՁԼՄ-ներով




Քաղաքացիական կազմակերպությունների գործունեություն




2. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ


Թափոնների թերի կառավարման բնապահպանական ազդեցությունները




Թափոնների թերի կառավարման սոցիալական ազդեցությունները




Թափոնների թերի կառավարման տնտեսական ազդեցությունները ազդեցությունները




Թափոնները աղբավայր հեռացնելու




Թափոնների հիերարխիայի իմացությունը




Օրենսդրության խրախուսող գործիքներ



Օրենսդրության պատժիչ գործիքներ




Թափոնների կառավարման ոլորտում իրականացվող բնապահպանական ծրագրեր




3. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԵՎ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ


Թափոնների կայուն կառավարման կարևորությունը




Թափոնների տեսակավորման օգուտները




Թափոնների վերօգտագործման օգուտները



Թափոնների վերամշակման, օգտահանման օգուտները




Իրազեկվածության արշավների օգուտները




4. ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ


Աղբամանների տեղեկայվածություն




Աղբամանների վիճակ




Չտեսակավորված թափոնների հավաքման հաճախականություն




Համայնքի սանիտարական վիճակ



Աղբահանության վճար



Մատուցված ծառայությունների ընդհանուր վիճակ



Ստորև ամփոփվում են Տաշիրի համայնքապետարանի կողմից բնակիչների շրջանակներում իրականացված հարցման արդյունքները:

Աղյուսակ 15

Հարցեր	Իրազեկվածության/գոհունակության աստիճան /1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց/	Նշումներ/առաջարկություններ
1. Թափոնների կառավարման վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրներ	3	
Կրթության տարբեր աստիճաններ (նախադպրոցական, դպրոցական, բուհական)	3	
Սոցիալական գովազդներ	3	
Պաշտոնական տեղեկատվություն ՀԼՄ-ներով	3	
Քաղաքացիական կազմակերպությունների գործունեություն	3	
2. Թափոնների կառավարման վերաբերյալ տեղեկացվածություն	3	
Թափոնների թերի կառավարման բնապահպանական ազեցությունները	3	
Թափոնների թերի կառավարման սոցիալական ազեցությունները	3	
Թափոնների թերի կառավարման տնտեսական ազեցությունները	3	
Թափոնները աղբավայր հեռացնելու ազդեցությունները	3	
Թափոնների հիերարխիայի իմացություն	3	
Օրենսդրության խրախուսող գործիքներ	2	
Օրենսդրության պատժիչ գործիքներ	3	
Թափոնների կառավարման ոլորտում իրականացվող բնապահպանական ծրագրեր	2	
3. Թափոնների կայուն կառավարման վերաբերմունք և ակնկալիքներ	4	
Թափոնների կայուն կառավարման կարևորությունը	4	
Թափոնների տեսակավորման օգուտները	4	
Թափոնների վերօգտագործման օգուտները	4	
Թափոնների վերամշակման, օգտահանման օգուտները	4	
Իրազեկվածության արշավների օգուտները	4	
4. Բնակիչների և տնտեսվարողների գոհունակություն	4	

Աղբամանների տեղակայվածություն	4	
Աղբամանների վիճակ	4	
Չտեսակավորված թափոնների հավաքման հաճախականություն	4	
Համայնքի սանիտարական վիճակ	4	
Աղբահանության վճար	4	
Մատուցված ծառայությունների ընդհանուր վիճակ	4	

1.7 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵ

Սույն բաժնում ներկայացվում է Պլանավորման տարածքում ֆինանսատնտեսական նկարագիրը:

ա. Աղբահանության եկամուտների և ծախսերի ընդհանուր նկարագրություն

Աղյուսակ 16

Տարի	Փաստացի բնակչության թիվ	Աղբահանության սահմանված վարձավճարը, դրամ/անձ	Գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը	Աղբահանության համակարգում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների թիվը /աղբահանության պայմանագիր /	Վարձավճարների հավաքման ընդհանուր ծախսեր, դրամ/տարի	Աղբի հավաքման և տեղափոխման ծախս, դրամ/տարի	Աղբավայրում աղբի տեղադրման ծախս, դրամ/տոննա
2023	18957	100գյուղ./150քաղ.	192	192	0	80287200	0
2024	20734	100գյուղ./150քաղ.	242	236	0	91263200	0

բ. Հավաքագրում և ծախսեր

Սույն ենթաբաժնում ներկայացվում է աղբահանության և թափոնների կառավարման եկամուտներն ու ծախսերը վերջին երկու-երեք տարվա ընթացքում (Աղյուսակ 17):

Աղյուսակ 17

Տարի	Եռամսյակ	Աղբահանության եկամուտ/ հավաքագրում						Եկամուտ վերամշակման և ենթակա թափոնների վաճառքից	Աղբահանության ծախս		Սանիտարական մաքրման ծախս	
		Բնակչություն			Տնտեսվարող սուբյեկտներ				Պլան	Փաստ	Պլան	Փաստ
		Պլան	Փաստ	%	Պլան	Փաստ	%					

2022	1-ին եռ.	1500	975.2	65	1000	898.1	90	0	6886.1	6886.1	5593.9	5593.9
	2-րդ եռ.	2700	1415.4	52	1900	1206.1	63	0	6886.1	6886.1	5593.9	5593.9
	3-րդ եռ.	2100	1069.6	51	1300	831.6	64	0	6886.1	6886.1	5593.9	5593.9
